



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԵՒ
 ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ Ա.Մ.Ն. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 1 Դեկտեմբերին Տիրթոյիթ մեկնեցաւ, միանալու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Ա. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի շքախումբին եւ մասնակից դառնալու շարք մը ձեռնարկներու եւ հանդիսութիւններու: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանայ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

Ծանօթ է որ Վեհափառ Հայրապետը պաշտօնական հրաւեր մը ստացած էր Մենթ Ճոնզ համալսարանէն, 2006 տարուան «Pax Christi» բարձրագոյն կարգի շքանշանը ստանալու համար: Շքանշանի տուչութեան հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ 6 Դեկտեմբերին:

Այս առիթէն օգտուելով, մեր Կաթողիկոսութեան Հիւսիսային Ամերիկայի երեք թեմերուն՝ Արեւելեան, Արեւմտեան Ամերիկայի ու Քանադայի թեմերուն միջեւ համատեղ գործակցութեամբ եւ ծրագրումով, կազմակերպուած է երիտասարդական երկօրեայ սեմինար մը, որ եզակի առիթ մը պիտի ըլլայ մեր երիտասարդներուն համար՝ հաղորդակից ըլլալու Վեհափառ Հայրապետի մտածումներուն ու յորդորներուն:

Երիտասարդական համագումարին բացումը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Դեկտեմբեր 2-ին, կ.ե. ժամը 3-ին. ժողովը պիտի շարունակուի մինչեւ Կիրակի յետմիջօրէ: Արեւմտեան մեր Թեմէն իրենց մասնակցութիւնը կը բերեն 16 երիտասարդներ եւ երիտասարդուհիներ:

Համագումարի գլխաւոր թեման է »Հայ եկեղեցին երեկ, այսօր եւ վաղը«: Պիտի տրուին զանազան դասախօսութիւններ, իսկ գլխաւոր դասախօսը պիտի ըլլայ Վեհափառ Հայրապետը, որ իր հայրապետական խօսքը պիտի ուղղէ ներկայ երիտասարդութեան:

Համագումարին՝ յատուկ բաժին տրամադրուած է նաեւ երիտասարդներուն, որպէսզի արտայայտուին զիրենք մտահոգող հարցերու մասին եւ իրենց առաջարկները կատարեն՝ վաղուան գիտակից, ամուր հաւատքով եւ գործօն երիտասարդներու ներկայութիւնը ապահովելու հայ եկեղեցւոյ ծառայական դաշտերուն ու հայ ազգի անդաստանին մէջ:

Դասախօսութեանց եւ զրոյցներու առընթեր, նկատի առնուած են շարականներու ուսուցում, հոգեւոր համերգ, անձնական վկայութիւններ, Ս. Գիրքի սերտողութեան պահեր: Սերտողութիւնները պիտի առաջնորդեն Թեմիս Առաջնորդ Սրբազան Հայրը եւ Քանադայի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեան:

Երկօրեայ համագումարին կողքին, Առաջնորդ Սրբազանը պիտի մասնակցի Վեհափառ Հայրապետի շրջապտոյտին եւ տեսակցութիւններուն՝ Տիթրոյիթի, Ինտիանա եւ Մինիսոթայի մէջ:

Վեհափառ Հայրապետին Միացեալ Նահանգներ այցելութիւնը պիտի տւել մէկ շաբաթ:

Առաջնորդ Սրբազանը Լոս Անճելըս պիտի վերադառնայ Հինգշաբթի, Դեկտեմբեր 7-ին:

YOUTH GATHERING WITH H.H. CATHOLICOS ARAM I

On Friday, December 1st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for Detroit, Michigan to join the entourage of His Holiness for the two-day youth gathering organized by the Prelacies of the U.S. and Canada. Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barhev Gulumian accompanied the Prelate. Sixteen youth from the Western Prelacy are also to participate in the gathering.

The gathering is scheduled to convene at 3:00 p.m. on Saturday, December 2nd, and will continue until Sunday afternoon. The title of the gathering is “Armenian Church 2006” and the theme is “Your Church, Your Future, Engage.” His Holiness will convey His Pontifical message to the youth during His keynote address. The gathering will also offer the youth the opportunity to express their concerns and suggestions regarding the Armenian Church. Alongside lectures, the gathering will feature the study of hymns, a concert of spiritual songs, and Bible study by our Prelate, H.E. Archbishop Moushegh Mardirossian, and H.E. Archbishop Khajag Hagopian, Prelate of Canada. H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern U.S. will offer the closing remarks.

On Wednesday, December 6, 2006, Saint John’s University in Collegeville, Minnesota will present their highest honor, the “Pax Christi” Award, to H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia. In addition to the gathering, the Prelate will also accompany His Holiness during His Pontifical visits in Detroit, Indiana, and Minnesota.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԼԻՔԱՆԱՆԻ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ

Լոս Անճելըսի Լիբանանեան Հիւպատոսարանը անցեալ շաբաթ յայտարարեց, թէ Լիբանանի ճարտարարուեստի նախարար Փիեռ ճըմայէլի սպանութեան առիթով, ջնջած է անկախութեան տօնին առիթով նախատեսուած պաշտօնական ընդունելութիւնը եւ թէ՛ այս տիտուր առիթով, Նոյեմբեր 27-ին եւ 28-ին, ցաւակցութիւններ պիտի ընդունի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազանը Երեքշաբթի, Նոյեմբեր 28-ի առաւօտեան, հաղորդակցութեան մէջ մտաւ Լիբանանի Գլխաւոր Հիւպատոս Շարպէլ Ուահպիին հետ, եւ յանուն Թեմիս Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան, ցաւակցութիւն յայտնեց անոր: Առաջնորդ Սրբազանը նաեւ Հիւպատոսէն ինդրեց այս զգացումները փոխանցել Լիբանանի պետութեան վարիչներուն:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զոր, Զոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. վիգէն Ա. Թիւրք. Վասիլեան, եւ Ազգ. Վարչութեան ատենադպիրը՝ Տիար Պօղոս Սասունեան Երեքշաբթի, Նոյեմբեր 28-ի կէսօրին այցելութիւն մը տուին Լիբանանի Զիւլպատոսարանը եւ հիւլպատոսին ու անձնակազմին ցաւակցութիւն յայտնելէ ետք, ցաւակցական գիր մը արձանագրեցին այս տխուր առիթով բացուած յուշամատենին մէջ:

PRELATE EXPRESSES HIS CONDOLENCES TO THE CONSUL GENERAL OF LEBANON

As a result of the assassination of Lebanese Industry Minister Pierre Gemayel on Tuesday, November 21st, the Consulate General of Lebanon announced last week that it was canceling Independence Day celebrations, and instead accepting condolences on November 27 and November 28.

On Tuesday, November 28, the Prelate, H.E. Archbishop Mardirossian, expressed his condolences to Consul General Charbel Wehbe, and asked that he convey his sentiments to the Lebanese government.

On the same day, on behalf of the Prelate, Archpriest Fr. Vicken Vassilian, Pastor of St. Garabed Church, and Executive Council secretary Mr. Boghos Sassounian visited the Lebanese Consulate to personally offer condolences.

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հայ Կրթական Հիմնարկութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, Դեկտեմբեր 3-ին, երեկոյեան ժամը 6-ին, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Փասատինայի «Ռիթը Զարլթըն» պանդոկին մէջ. ձեռնարկը կազմակերպուած է Հիմնարկութեան կողմէ Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի մէջ 150 դպրոցներու վերանորոգման աշխատանքներու աւարտին առիթով:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զոր, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Վազգէն Թիւրք. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութիւններն ու շնորհաւորանքի խօսքը:

ARMENIAN EDUCATIONAL FOUNDATION ANNUAL BANQUET

On Sunday, December 3rd, the Armenian Educational Foundation has organized a banquet in celebration and recognition of the renovation of over 150 schools in Armenia, Karabakh, and Javakhk. The banquet will take place at 6:00 p.m. at the Ritz Carlton Hotel in Pasadena.

Rev. Vazken Atmajian, Pastor of St. Mary's Church, will represent the Prelate and convey his blessings and congratulatory remarks.

ՀՈԳԵՒՈՐ ԱՆՈՒՆԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ

Հայ եկեղեցւոյ հոգեւոր այլ ծառայութեանց ծիրէն ներս կ'իյնայ նաեւ բանտարկեալներու հոգեւոր սնունդի մատակարարումը: Առ այդ, բարձր տնօրինումովը Թեմիս Առաջնորդ Սրբազան Զօր, աւելի քան տարիէ մը ի վեր կանոնաւոր կերպով հոգեւոր սնունդ կը մատակարարուի Լոս Անճելըս շրջանի հայ բանտարկեալներուն:

Մեր Թեմին անունով եւ պետական ճանաչողութեամբ բանտարկեալներու հոգեւոր մատակարարման հայկական յատուկ բաժանմունքի գլխաւոր խորհրդատու նշանակուած է Թեմիս գաւակներէն՝ բարեշնորհ Ռաֆֆի Սարկաւազ Կարապետեան:

Թեմիս հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան եւս կանոնաւոր կերպով ամէն Երկուշաբթի կ'այցելէ բանտերը: Սոյն աշխատանքին համար հոգեւոր մատակարար նշանակուեցաւ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան: Հայր Սուրբը եւս, շաբաթական դրութեամբ, սկսած է այցելել հայ բանտարկեալներուն եւ գանոնք մխիթարել ու գօտեպնդել Աստուծոյ խօսքով:

SPIRITUAL GUIDANCE OFFERED TO ARMENIAN INMATES

By the ordinance of the Prelate, over a year ago a program to offer spiritual guidance to Armenian inmates in the Los Angeles area was established. Deacon Raffi Garabedian and Rev. Ashod Kambourian, Pastor of Holy Cross Cathedral, visit the inmates on a regular basis. Recently, Very Rev. Fr. Barthev Gulumian, Co-Director of the Christian Education Department of our Prelacy also began visiting prisons on a weekly basis, offering spiritual nourishment to the inmates.